ԹԻՎ 6 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 8-Ա

22 սեպտեմբերի 2023թ.
ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Երևանի ավագանու ընտրություններում թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում ձևավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները՝ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումները

2023 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի են ունեցել Երևանի ավագանու ընտրություններ: Ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորվել է թվով 52 ընտրական տեղամաս, սահմանվել են թվով 52 տեղամասային կենտրոն և կազմավորվել թվով 52 տեղամասային ընտրական հանձնաժողով:

Թվով 52 տեղամասերից 31 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառումներ առկա չեն: Այդ տեղամասերն են՝ 6/01, 6/02, 6/03 6/04, 6/05, 6/07, 6/08, 6/09 6/10, 6/11, 6/12, 6/14, 6/16, 6/17, 6/18, 6/19, 6/20, 6/21, 6/23, 6/24, 6/27, 6/29, 6/31, 6/33, 6/34, 6/35, 6/36, 6/38, 6/39, 6/40, 6/42:

Թիվ ***6/06 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Հայաքվե» դիտորդական առաքելություն

Ընտրապրոցեսը նկարահանելու ընթացքում տեղի ունեցավ վիճաբանություն, ինչեց սպառնալիք Ն. Հոխիկյանի նկատմամբ չջնջելու դեպքում ՔՊԿ ներկայացուցիչ Կարեն Հովհաննիսյան կողմից:

2) Հանձնաժողովի անդամ Մելքոնյան Մարինա

Ընտրողը ծրարի մեջ ոչ մի քվեաթերթիկ չի դրել և չի ցանկացել քվեարկել /թիվ 1531/ Ալավերդյան Արամ: Ծրարը անմիջապես մարվել է:

3) «Հայաքվե» դիտորդական առաքելություն

Մի ընտրող բացահայտ քվեարկեց քվեատուփից դուրս, հայտարարելով, որ ինքը պրոբլեմ չունի:

4) «Հանրապետություն» կուսակցության ավագանու թեկնածու

Դիտորդը ընտրատարածք է ներկայացել «Հայաքվե» վերնաշապիկով՝ «Հայաքվե»-ի դիտորդն է:

Թիվ ***6/13 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

5) Ավետիսյան Ենոք Գրիգորի «Ապրելու Երկիր»:

Նույն պահին /08:40/ նույն կուսակցությունից 2 վստահված անձ գտնվել են ընտրատեղամասում ՔՊԿ-ից

6) Սերոբյան Ռոման Ռոբերտի «Անկախ դիտորդ»

ՔՊԿ վստահված անձ Պետրոսյան Աբգարը շփումների մեջ է դրսում կուտակված անձանց հետ, որոնք ուղղորդում են ընտրողներին դեպի տեղամասային կենտրոն: Նույն անձը իր վրա է վերցնում հանձնաժողովի անդամի պարտականությունները և անդադար շփվում ընտրողների հետ:

7) «Ազգային Առաջընթաց» Աղաբեկյան Հրաչյա

Տեղամասին կից կուտակումներ են, որի վերահսկումը ոստիկանության գործառույթն է:

8) Սաֆարյան Հասմիկ «Հանրային ձայն»

ՔՊԿ վստահված անձը շատ է շփվում ընտրողների հետ:

9) Գևորգ Քոթանջյան «Անկախ դիտորդ»

«Հանրային ձայն»-ի երեք թեկնածու 12:00 ժամանակահատվածում ներս էին մտել տեղամաս, ակնհայտ ընտրող չէին և հանձնաժողովի նախագահին ճշտումներ էին անում:

10) Գևորգ Քոթանջյան «Անկախ դիտորդ»

Սպիտակ վերնաշապիկով անձնավորությունը, որը պարբերաբար մուտք է գործում տեղամասի միջանք, պարբերաբար տարբեր մարդկանց հետ ևս ներկայացավ Նարինե Տարասվիլի Գրիգորյանի ամուսին և պնդում էր, որ վերջինիս ամուսինն է, կինը նաև ընտրողին օգնող է գրանցվել:

11) Սերոբյան Ռոման «Անկախ դիտորդ»

ՔՊԿ երկրորդ վստահված անձը գտնվում էր ընտրատեղամասից 50մ շառավղով ներս և առաջացնում էր կուտակումներ:

Թիվ ***6/15 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

12) Արձանագրությունը Գրիգոր Կարապետյանի կողմից կատարված խախտման վերաբերյալ, որը կայանում է նրանում, որ 914 համարի փոխարեն գրառել է 1014, մյուսը 1264 համարի փոխարեն 1215-ը: Նախագահ Գևորգյան Արեմնուհի, քարտուղար Փիլիկյան Կարինե:

13) Գոհար Աբրոյան «Անկախ դիտորդ» դիտորդական առաքելություն

Խախտված է եղել վիճակահանության կարգը, առկա չի եղել արձանագրությունը: Արձանագրությունը կազմվել է դիտորդի միջամտությամբ:

Թիվ ***6/22 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

14) «Հայաքվե» դիտորդ Կարեն Տերյան, ՔՊ Արմեն Կարապետյան, «Ապրելու երկիր» Շավարշ Վարդանյան

Շիրազի 50 բն 36 1290, 1291 համարի բնակիչները, այլևս չեն ապրում բայց, ցուցակում կա:

15) Արման Հակոբյան Գարեգինի «Հանրային ձայն»

Քվաթերթիկները պահարանի մեջ չտեղավորելու պատճառով, դրված է պահարանի կողքը, ծածկված:

Թիվ ***6/25 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

18) Ռոման Ռոբերտի Սերոբյան տեղական դիտորդ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինք

Հանձնաժողովի նախագահը չի տիրապետում իր գործառույթներին, թույլ չի տալիս ինձ մոտենալ քվեախցիկին և դիտարկել քվեախցիկները: «Անկախ դիտորդը» առանց տեղեկացնելու մոտեցել է քվեախցիկին վիդեո նկարահանում, կատարելով քվեաթերթիկը հանել է իր տեղից որ նկարի:

19) Քվեախցիկում քվեաթերթիկները պատռված են և չեն համապատասխանում այն տվյալներին, որոնք պետք է լինեն: Քվախցիկում ընտրողներից քվեարկողներից մարդ լինելու դեպքում զգուշացվել է չխոչընդոտել ընտրությանը և ձեռք չտալ քվեաթերթիկները:

Թիվ ***6/26 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

20) Վանյան Սոնա Արամի «Մայր Հայաստան» կուսակցություն, Վարդանյան Տաթևիկ Ազատի ՔՊԿ

Վստահված անձը նկատել է, որ քաղաքացին նկարում է քվեաթերթիկը ոստիկանը մոտեցել է և քաղաքացին իր ներկայությամբ ջնջել է:

Քաղ. Ստելլա Մարգարյան AV0640052, կտրոն VAD669-36

Թիվ ***6/28 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

21) «Արդար Հայաստան» կուսակցություն թեկնածու՝ Մկրտչյան Արտակ Գվիդոնի

«Արդար Հայաստան» կուսակցության թեկնածուն գտնվում էր ընտրատեղամասում Արտակ Գ, նշումներ կատարվեց դիտորդներին՝ Անի Աահակյան, Ռոման Սերոբյան

22) Սարգսյան Կարլեն Գուրգենի /հանձ. անդամ/-ի կնիքով Գայանե Պետրոսյանը- «Ապրելու Երկիր»

Սխալմամբ ստորագրությունը դրվել է այլ անձի անվան դիմաց: /Հանձնած/ Ընտրատարածքից թույլատրվել է կրկնակի ստորագրություն դրվի, որ 2 ձայն էլ հաշվի առնվի:

Թիվ ***6/30 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

23) Նաիրի Հոխիկյան Խաչիկի «Հայաքվե» դիտորդական առաքելություն

Սարքերն ունեն անձնագրերի ճանաչելիության խնդիր

Թիվ ***6/32 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

24) Արձանագրություն «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդ Հերմինե Մովսիսյանը թ. 6/32 տեղամասային կենտրոնի դիմաց, արձանագրել է երեք անձանց, որոնք եղել են նաև թ. 6/18 և 6/19 տեղամասերում, նրանք եղել են, ոչ թե

ընտրողներ կամ դիտորդներ, այլ եկել են առանձին զրուցել իրենց վստահված անձի հետ և դիտորդին տեսնելու պես հեռացել են տեղամասից:

Թիվ ***6/37 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

25) Բադալյան Ահարոն Աղախանի

Պարզվել է քվաթերթիկը, որի մեջ փաթաթված է անհատական կնիքը անդամի վնասված է: Բացատրվել է, որ ծալել է կնիքը, որպեսզի հագուստը չկեղտոտվի:

Թիվ ***6/41 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

26) Խաչատրյան Կարինե /դիտորդ/ «Քվեատուփը կաղապատված չէր սահմանված կարգով, կաղրակնիքները տեղադրված չէր սահանված կարգով:»:

27) Բաբայան Սոնա «Ընտրողը ձեռքում պատռել է կտրոնը / պատահմամբ/»:

Թիվ ***6/43 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

28) Գագիկ Հարությունյան «Հայաքվեյի դիտորդ»

Երեք անձ ներկայանալով տեղամաս, որպես Ռուսաստանի դիտորդներ ցանկանում էին դիտարկում ներկայացնել ընտրատեղամասում, սակայն բեյջերի վրա բացակայում էր քյուառ կոդը և հրաժարվեցին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ հանձնաժողովի նախագահը թույլ չտվեց իրականացնեն դիտարկում և հեռացան:

29) Հանձնաժողովի նախագահ և քարտուղար

Ժամը 11:30 սահմանում 4 անձ ներկայացան տեղամաս: Մի անձ ներկայացավ թարգմանիչ շփոթության մեջ գտնվող քարտուղարին այդիի փոխարեն ներկայացրեց դիտորդ, որի արդյունքում կատարել է սխալ գրառում դիտորդի համար սահմանված տեղում:

30) Հանձնաժողովի նախագահ և քարտուղար

Երկու այցելուի գրանցումը ջնջվել է, քանի որ չեն ներկայացրել անձը հաստատող փաստաթուղթ և մուտք գործել տեղամաս:

31) Հանձնաժողովի անդամներ Սամվել Ստեփանյանը, Էլմիրա Գասպարյան, Հովսեփ Հովակիմյան, Արեգ Հովակիմյան, Թաթուլ Հովակիմյան, Կարեն Տոնոյան, Հասմիկ Խոջոյան, Գայանե Միրզախանյան,

Վստահված անձ՝ Գևորգ Գրիգորյան, Վահե Պողոսյան, Արթուր Պետրոսյան,

Ժամը 16:15-ի սահմանում քվեատուփ մոտ գտնվող հանձնաժողովի անդամը սխալմամբ ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցրել է քաղաքացուն տրամադրվող կտրոնի վրա: Քաղաքացուն տրամադրվել է նոր դրոշմանիշ, որը փակցվել է քվեաթերթիկի վրա:

32) Գագիկ Հարությունյան «Հայաքվեյի դիտորդ»

Ընտրության ամբողջ օրվա ընթացքում ընտրական տեղամասի դարպասից դուրս՝ գլխավոր փողոցի վրա նկատել են նույն դեմքերի ներկայությունը և նույն մեքենաների կողմից տարբեր մարդկանց ընտրական տեղամաս ուղղորդում էր, վերոնշյալ մարդկանցից որևէ մեկը չի ունեցել ընտրական գործընթացի մեջ:

Թիվ ***6/44 փեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

33) Գագիկ Հարությունյան «Հայաքվե» դ/կ

Դիտորդի առաջարկով A-4 ֆորմատի թղթով և սկոճով փակեցինք քվեատուփի հատակային անցքերը:

34) Ընտրողը մտնելով քվեախուց չկարողանալով կատարել ընտրություն թղթերը խառնելով իրար 2 անգամ դուրս եկավ:

35) Հանձնաժողովի նախագահը մոտենալով դիտորդին խնդրանքով, որ դիտարկի իր կողմից առաձացած սխալի ուղղումը:

36) Եղիազարյան Հայկազ ՔՊ վստահված անձ

Հանձնաժողովի նախագահը դիտորդի ներկայաությամբ պատռեց և մարեց քվեաթերթիկը:

37) Գագիկ Հարությունյան «Հայաքվե»դ/կ

Ընտրության ամբողջ օրվա ընթացքում ընտրատեղամասի դարպասներից դուրս, բակի փողոցում պարբերաբար նկատել եմ նույն մարդկանց ներկայությունը, որոնք կապ չունեն ընտրական որևէ կազմակերպչական պրոցեսի հետ, ինչպես նաև նույն մեքենաների կողմից անընդհատ կերպով մարդկանց դեպի ընտրատեղամաս ուղորդումը:

Թիվ ***6/45 փեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

38) Գագիկ Հարությունյան Վարդանի. «Հայաքվե» դ/կ

«Հայաքվե»-ի դիտորդի կողմից դիտարկում իրականացնելու հետ, առաջարկվել է քվեատուփի գործընթացի անցքերը փակել և փակեցին թղթով և սկոճով:

39) Գագիկ Հարությունյան Վարդանի «Հայաքվե»

Հանձնաժողովի նախագահը վերևի դիտարկման համար առաջարկում էր այլ տեղ գրանցումը, բայց ոչ հստակ սահմանված տեղը

Թիվ ***6/46 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

40) Սարգսյան Գոհար Նիզայի «Ապրելու Երկիր», Հարությունյան Արտակ «Հանրային ձայն» Հարությունյան Արտակ,Աբգարյան Արթուր <<ՔՊ>> կուսակցություն

ՔՊ ավագանու թեկնածու Արտակ Հակոբյանը մտել է ընտրատեղամաս և փորձում էր տալ ցուցումներ:

41) Աբգարյան Արթուր ՔՊԿ ««ՔՊԿ» ավագանու թեկնածու Արտակ Հակոբյանը մտել է ընտրատեղամաս և փորձել է տալ ցուցումներ:»:

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի եզրակացությունները

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

1) Սույն որոշման 1-ին կետի 1-ին, 18-րդ և 19-րդ ենթակետերում նշված են հանգամանքներ, որոնք առնչվում են դիտորդի իրավունքների իրականացմանը խոչընդոտելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քվեարկության օրը թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արդեն իսկ իրազեկված է եղել նշված հանգամանքների վերաբերյալ, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից ստացված հաղորդումների շրջանակներում ձեռնարկված միջոցների մասին: Ներկայացված հանգամանքների վերաբերյալ նյութերն մասով ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Սույն վարչական վարույթի շրջանակներում թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ընտրական հանձնաժողովները ներկայացված հանգամանքները գնահատելով որպես օպերատիվ լուծում պահանջող հարց՝ հետամուտ են եղել ապահովելու դիտորդի իրավունքների իրականացումը: Դիտորդները հնարավորություն են ունեցել իրականացնելու նկարահանում և դիտորդների

ներկայացված պահանջը՝ արձանագրելու գրանցամատյանում իր գնահատականը, բավարարվել է:

Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված են հանգամանքներն չեն ազդել քվեարկության արդյունքների վրա:

2) Սույն որոշման 1-ին կետի 2-4-րդ, 7, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ, 22-րդ, 23-րդ, 25-րդ, 27-31-րդ, 33-39-րդ ենթակետերում նշված գրառումներում ներկայացվում են հանգամանքներ, որոնք կամ չեն հանդիսանում քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարված Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, կամ ներկայացվում են հնարավոր խախտման կանխարգելման կամ տարաբնույթ իրավիճակների շտկման մասին արձանագրումներ կամ պարզապես արձանագրում են որոշակի իրողություններ: Վերը նշված գրառումներում ներկայացված չեն հանգամանքեր, որոնք կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

3) Սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված գրառումներով ներկայացված է, որ «ընտրատեղամասում» ներկա են եղել նույն կուսակցությունից 2 վստահված անձ: Գրանցամատյանի ուսումնասիրությամբ նշված հանգամանքը հերքվեց: Միաժամանակ, թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հեռախոսազրույցի միջոցով թիվ 6/13 տեղամասային ընտրական հանձնժողովի նախագահից պարզեց, որ նույն կուսակցությունից երկրորդ վստահված անձ է ներկա եղել դրսում:

Ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկ վստահված անձ: Ակնհայտ է, որ վստահված անձանց համար սահմանված քանակական սահմանափակումը կիրառելի է միայն քվեարկության սենյակի նկատմամբ: Ընտրական օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները գրանցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, գրանցում իրականացրած ընտրական հանձնաժողովը թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցչին տալիս է կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով վստահված անձանց վկայականներ:

Վերը նշված իրավակարգավորումները վկայում են, որ կուսակցությունը կարող է ունենալ կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով վստահված անձինք, և կուսակցությունն է համակարգում նրանց աշխատանքը՝ միայն մեկ վստահված անձ ունենալու պահանջ դնելով ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում գտնվելու դեպքում:

Ներկայացված հանգամանքներում քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտում առկա չէ:

4) Սույն որոշման 1-ին կետի 6-րդ, 8-րդ, 24-րդ, 32-րդ, 37-րդ ենթակետերում նշված գրառումներով ներկայացվում են հանգամանքներ առ այն, որ քվեարկության օրվա ընթացքում տեղամասային կենտրոն հանդիսացող տարածքից դուրս պարբերաբար նկատել են նույն մարդկանց ներկայությունը, որոնք, ըստ գրառումների, կապ չունեն ընտրական գործընթացի հետ, ինչպես նաև նույն մեքենաների կողմից անընդհատ մարդկանց դեպի տեղամասային կենտրոն են տեղափոխել:

Նման հանգամանքներ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվել նաև «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության 19.09.2023թ. դիմումով, որին կից ներկայացվել է նաև մեկ ձայնասկավառակ, որի ուսումնասիրությամբ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ լուսանկարներից մեկում առկա է մեկ սև ամենագնաց մեքենա՝ 01 LU 800 պետհամարանիշներով: Մյուս երկուսը՝ մի դեպքում՝ 3, մյուս դեպքում՝ 4 անձանց լուսանկարներ են: Լուսանկարներից մեկում նկատվում է ընտրական տեղամասի համարով ցուցանակ, որի վրա նշված է «6/43»: Գրառումների, վարչական վարույթում առկա նյութերի, ինչպես նաև հեռախոսազանգերի միջոցով թիվ 6/13, 6/18, 6/19, 6/32, 69/43 և 6/44 տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների կողմից ներկայացրած բանավոր բացատրությունների ուսումնասիրությամբ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացված հանգամանքներում քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտումներ առկա չեն: Ներկայացված հանգամանքները չեն կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

5) Սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում ներկայացված է, որ տեղամասային կենտրոն են ներկայացել թեկնածուներ:

Սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում ներկայացված է, որ ««Հանրային ձայն» կուսակցության երեք թեկնածու 12:00 ժամանակահատվածում ներս էին մտել»: Նույնանման գրառում է առկա նաև սույն որոշման 1-ի կետի 21-րդ ենթակետում, որում նշված է, որ «Արդար Հայաստան» կուսակցության թեկնածու Արտակ Գվիդոնի Մկրտչյանը «գտնվում էր ընտրատեղամասում»: Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հեռախոսազրույցի միջոցով թիվ 6/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից պարզեց, որ «Հանրային ձայն» կուսակցության մեկ թեկնածու մոտեցել է թիվ 6/13 տեղամասային հանձնաժողովի նախագահին՝ հարցնելու համար, թե արդյո՞ք «Հանրային ձայն» կուսակցության վստահված անձի գրառում

կատարելու վերաբերյալ պահանջը բավարարվել է: Նախագահը թեկնածուի հետ դուրս է եկել քվեարկության սենյակից, պատասխանել վերջինիս հարցերին, և թեկնածուն հեռացել է: Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հեռախոսազրույցի միջոցով թիվ 6/28 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից պարզեց, որ «Արդար Հայաստան» կուսակցության թեկնածուն մոտեցել է թիվ 6/28 տեղամասային հանձնաժողովի նախագահին, ով նրան պարզաբանել է, որ քվեարկության ընթացքում թեկնածուն չի կարող ներկա գտնվել քվեարկության սենյակում: Թեկնածուն անմիջապես լքել է քվեարկության սենյակը:

Սույն որոշման 1-ին կետի 40-րդ և 41-րդ ենթակետում ներկայացված է, որ «ՔՊ ավագանու թեկնածու Արտակ Հակոբյանը մտել է ընտրատեղամաս և փորձում էր տալ ցուցումներ:»: Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հեռախոսազրույցի միջոցով թիվ 6/46 տեղամասային հանձնաժողովի նախագահից պարզեց, որ թեկնածու Արտակ Հակոբյանը մոտեցել է թիվ 6/46 տեղամասային հանձնաժողովի նախագահին, ով նրան պարզաբանել է, որ քվեարկության ընթացքում թեկնածուն չի կարող ներկա գտնվել քվեարկության սենյակում: Թեկնածուն անմիջապես լքել է քվեարկության սենյակը:

Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացված հանգամանքներում քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտումներ առկա չեն և չեն կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

6) Սույն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետում ներկայացված է, որ հանձնաժողովի անդամ Գրիգոր Կարապետյանը խախտել է ընտրողների գրանցման համար Ընտրական օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ակտերով սահմանված կարգը՝ հնարավորություն ընձեռելով ընտրողներին ստորագրել սխալ տողերում:

Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝

«Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին: Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում կատարվող նշումների մասին» թիվ 126-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամը՝ տեղեկացնելով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված և քվեարկության կտրոն ստացած՝ քվեարկությանը չմասնակցած այն ընտրողին, որի տվյալների դիմաց ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ, հնարավորություն է տալիս ստորագրելու ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում՝ իր տվյալների դիմաց՝ ստորագրության կողքին դնելով իր անհատական կնիքը:»:

Հետևապես, սխալ ստորագրելու դեպքում հանձնաժողովը պետք է հնարավորություն ընձեռեր այդ տուղում նշված տվյալներով անձին ստորագրել իր տվյալների տողում՝ «Լրացուցիչ նշումներ» սյունակում: Սակայն նախագահը թույլ է տվել, որ ընտրողները ստորագրեն երկրորդ անգամ՝ արդեն իրենց տվյալները պարունակող տողում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ երկու դեպքում թույլ է տրվել Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամի կողմից ընտրողին ընտրողների ցուցակում գրանցելու սահմանված կարգի խախտում, սակայն ընտրողի ընտրելու իրավունք չի սահմանափակվել և չի խոչընդոտվել: Դրանք եղել են եզակի դեպքեր, ինչով պայմանավորված նշված խախտումները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն անհրաժեշտ է համարում միջնորդություն ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ թիվ 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Գրիգոր Կարապետյանի և նույն հանձնաժողովի նախագահ Արմենուհի Գևորգյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով:

7) Սույն որոշման 1-ին կետի 13-րդ ենթակետում ներկայացված է, որ հանձնաժողովը խախտել է վիճակահանության կարգը, առկա չի եղել արձանագրությունը: Թիվ 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը պարզաբանեց, որ վիճակահանության արդյունքները սկզբից գրվել են մաքուր թղթի վրա, այնուհետև անցկացվել են գրանցամատյան: Պնդեց, որ գրանցամատյանը պատշաճ լրացվել է: Գրանցամատյանի ուսումնասիրությամբ նշված հանգամանքը փաստվում է:

Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացված հանգամանքներում քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտումներ առկա չէ, նշված հանգամանքները չեն կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

8) Սույն որոշման 1-ին կետի 26-րդ ենթակետում ներկայացված է, որ քվեատուփը սահմանված ձևով չի կնքվել հատուկ կապիչներով: Թիվ 6/41 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պարզաբանմամբ՝ մինչև իր կողմից կապիչները չհրկիզվող պահարանից հանելը՝ հանձնաժողովի անդամ Սերյոժա հարությունանը արդեն իսկ կպչուն ժապավենով փակել էր քվեատուփը և հնարավորություն չկար սահմանված կարգով կապիչներով կապել քվեատուփը:

Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացված հանգամանքներում քվեարկության ընթացքի խաթարում, գատնիության խախտում տեղի չի ունեցել: Թեև կապիչները չեն կիրառվել, սակայն քվեատուփը փակ է եղել: Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքները չեն կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 17.09.2023թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

2. Միջնորդել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել թիվ 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Գրիգոր Կարապետյանի և նույն հանձնաժողովի նախագահ Արմենուհի Գևորգյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

Թիվ 6 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝ **Ս. Սարգսյան**